ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2015 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ : Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, որոնց միջոցով համայքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ :

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 29.12.2015 թվականի թիվ 1381-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.02.2016 թվականի թիվ 6 որոշման պահանջների 2016 թվականի առաջին կիսամյակում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Փոռի, Ազատեկի, Զառիթափի, Գոմքի, Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի և Նոր Ազնաբերդի համայնքներում: Իրականացված վարչական

հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի կայքում:

Արձանագրված թերություններն ու բացթողումները շտկելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական, խորհրդատվական օգնություն:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ.

- Համակարգվել է 2016 թվականի ապրիլի 17-ին կայացած Գետափի համայնքի ավագանու ընտրությունների գործընթացը:

Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ Ն.Սիմոնյան

28.07.2016թ.